Ռուսական դիվանագիտությունը ռուսատյացություն է առաջացնում Հայաստանում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 14.02.2024թ.

2024 թ. փետրվարի 10-ին ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Ս. Կոպիրկինը հարցազրույց է տվել Sputnik ռադիոյին, որում մեկնաբանել է Մոսկվա–Երևան հարաբերություններում վերջերս առաջ եկած դժվարությունները: Կոպիրկինը, մասնավորապես, հայտարարել է, որ *«այժմ կարծես այդ հարաբերությունների ամրության ստուգման շրջան է»,* բայց միևնույն ժամանակ ընդգծել է, որ անկախ ամեն ինչից, Ռուսաստանը շարունակում է Հայաստանին իր դաշնակիցը համարել և մտադրություն չունի լքելու Հարավային Կովկասը, որքան էլ որ որոշակի քաղաքական ուժեր դրան ձգտեն թե՛ տարածաշրջանում, թե՛ դրանից դուրս: Դեսպանն ուղղակիորեն մեղադրել է արևմտյան երկրներին՝ տարածաշրջանի հիմնախնդիրներն օգտագործելու և այստեղ Ռուսաստանի դերը թուլացնելու նկատառման մեջ և ճեղքեր ստեղծելու Հայաստան–Ռուսաստան և Հայաստան–Իրան երկկողմ հարաբերություններում: Նա նաև ակնարկել է, որ Հայաստանի իշխանություններն ու ժողովուրդը չպետք է տրվեն Արևմուտքի նմանատիպ խաղին՝ հույս հայտնելով, որ հարաբերությունների հիմքը և երկու երկրների ու ժողովուրդների (ՌԴ-ի և ՀՀ-ի) օբյեկտիվ շահերը բավական ամուր են, որպեսզի անցնեն ներկա փորձությունների միջով:

Ընդհանրապես Հարավային Կովկասում և, մասնավորապես, Հայաստանում Արևմուտքի «իսկական շարժառիթների» վերլուծության համատեքստում, դեսպանի փաստարկները դժվար թե եռանդագին վիճարկվեն հայկական իշխանությունների կողմից, որը կարողացել է վերջին 2-3 տարիներին «փորձել» իր բոլոր ընկերներին, հատկապես, որ Արևմուտքն ուղղակիորեն հայտարարում է, Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակից օգտվելու և Մոսկվային այնտեղից դուրս մղելու մասին: Դժվար է նաև չհամաձայնել Կոպիրկինի այն մտքին, որ Հայաստանի ժողովուրդը չպետք է միամիտ լինի և ենթարկվի դաշնակից ՌԴ-ին նսեմացնելու քարոզչությանը, որը հղի է հայ ժողովրդի համար մեծ վտանգներով: Դա ողջամիտ դատողություն է, և պարոն Կոպիրկինը մեկ անգամ չէ, որ այն հնչեցրել է հայկական և ռուսական լրատվամիջոցներին տված իր հարցազրույցներում:

Եվ, այնուամենայնիվ, չի կարելի չնկատել, որ հակառուսական քարոզչությունը Հայաստանում, ըստ էության, ոչ միշտ է ստեղծվում Արևմուտքի հովանավորությամբ և փողերով, այլ հիմնականում կուտակվում է ռուսական

դիվանագիտության հռետորաբանության շնորհիվ և բացարձակապես անվճար: Եվ այս հռետորաբանության կործանարար ազդեցությունը հայ-ռուսական հարաբերությունների վրա զգալիորեն գերազանցում է արևմտյան հիմնադրամների և կառույցների կողմից հովանավորվող «քաղաքական տեղեկատվական արշավի» արդյունքները:

Որպեսզի վերոնշյալը մերկապարանոց չհնչի, պարոն դեսպանի ուշադրությունը հրավիրենք մի քանի օրինակի վրա:

Հունվարի 12-ին Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցչի պաշտոնում պարոն դեսպանի գործընկեր Մարիա Զախարովան բառացիորեն հայտարարել է. «*Ինչ վերաբերում է Ղարաբաղում էթնիկ զտումների մասին պնդումներին, ապա կրկին կցանկանայի տեսնել որոշ փաստեր: Եթե կա որևէ միջազգային կազմակերպության կողմից Երևանում հեղինակավոր համարվող գեթ մեկ փաստաթուղթ կամ հայտարարություն, որը ցույց կտա, որ նման էթնիկ զտումներ եղել են, խնդրում ենք մեզ տրամադրել հղումներն այդ փաստաթղթին»:*

Այնուհետև, ս. թ. փետրվարի 10-ին դիվանագիտական կորպուսում պարոն Կոպիրկինի մեկ այլ գործընկեր, ՌԴ արտաքին գործերի փոխնախարար Միխայիլ Գալուզինը *ՏԱՍՍ* գործակալությանը տված հարցազրույցում ասել է. *«Դա նրանց դժվարին, բայց կամավոր ընտրությունն էր»:*

Իսկ փետրվարի 8-ին, Գալուզինի հայտարարությունից երկու օր առաջ, պարոն Կոպիրկինի՝ մեկ այլ գործընկեր-դիվանագետ, ՌԴ ԱԳՆ նախկին փոխնախարար, իսկ այժմ՝ սենատոր, ՌԴ Դաշնային խորհրդի միջազգային հարաբերությունների կոմիտեի ղեկավար Գրիգորի Կարասինը *Парламентская газета*-ին տված հարցազրույցում Ադրբեջանի նախագահական ընտրություններին ԱՊՀ դիտորդական առաքելության կազմում իր մասնակցության մասին տվել է հետևյալ գնահատականը. *«Մարդիկ հասկանում են, որ քվեարկում են հանուն իրենց ապագայի, իսկ Իլհամ Ալիևի օրոք ապագան կանխատեսելի է և լուսավոր... Այն խնդիրների շուրջ որոշում ընդունելը, որոնք վերջին տարիներին եղել և լուծում են ստացել, առաջին հերթին, տարածքային խնդիրը, նոր լիցք է հաղորդում Ադրբեջանի դրական զարգացմանը թե՛ երկրի ներսում, թե՛ դրա արտաքին դիրքերի ամրապնդման գործում»:*

Եվ, վերջապես, պարոն Կոպիրկինի՝ Ադրբեջանում ՌԴ դեսպանի պաշտոնն զբաղեցնող գործընկերը փետրվարի 12-ին Բաքվի մամուլին հաղորդել է հետևյալը. *«Այժմ, հակաահաբեկչական գործողության ավարտից հետո, ռուս խաղաղապահները ադրբեջանական ուժերի հետ միասին պարեկություն են*

իրականացնում տարածքում՝ պաշտպանելով շենքերն ու մշակութային կառույցները»:

Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Հայաստանում ՌԴ դեսպանի նկատմամբ ամենայն հարգանքով, հաշվի առնելով վերը նշված հայտարարությունների միանշանակ բնույթը, պարոն Կոպիրկինը պետք է հակառուսական տրամադրությունների գեներացման աղբյուրներ որոներ բոլորովին այլ աշխարհագրական տարածքում: Իսկ Արևմուտքը կարող է քարոզչության վրա այլևս փող չծախսել, այլ, պարզապես, ճաշակել հայ հասարակության մեջ սերմանված ռուսատյացության պտուղները, որն օրեցօր աճում է ռուսական դիվանագիտության ջանքերի շնորհիվ: